Նախագահ
Թոմաս Ս. Մոնսոն



Լույս լինել

Ինձ հանարավորություն է ընձեռնվել մասնակցելու բազմաթիվ մշակութային տոնակատարությունների, որոնք անց են կացվում տաճարների նվիրագործման կապակցությամբ: Դրանք բոլորն էլ ինձ դուր են եկել, ներառյալ ամենավերջինը, որին այցելել եմ Ֆինեքսում՝ Արիզոնա, ԱՄՆ, անցած նոյեմբերին:

Երիտասարդ Վերջին Օրերի Սրբերը, ովքեր մասնակցում են մշակութային տոնակատարությունների, կազմակերպում են հրաշալի, հիշարժան ծրագրեր: Անցած տարի Ֆինեքսում, տոնակատարությունից անմիջապես առաջ, մասնակիցներին ես ասացի. «Դուք լույսի զավակներ եք»:

Ես ցանկանում եմ, որ Եկեղեցու ողջ երիտասարդությունն իմանա, որ իրենք լույսի զավակներ են: Որպես այդպիսին, նրանք պարտավորություն ունեն լինելու «ինչպէս լոյս աշխարհքի մէջ» (Փիլիպպեցիս Բ.15): Նրանք պարտականություն ունեն կիսվելու ավետարանի ճշմարտություններով: Նրանք կանչված են կանգնելու որպես տաճարի լույս՝ ավետարանի լույսը ճառագելով ավելի ու ավելի խավարող աշխարհում: Նրանք պատասխանատվություն են կրում պահելու իրենց լույսը վառ և անշեջ:

Որպեսզի կարողանանք «օրինակ [լինել] հաւատացեալներին» (Ա Տիմոթեոս Դ.12), մենք ինքներս պիտի հավատանք: Մենք պիտի զարգացնենք հավատք, որպեսզի հոգևոր առումով փրկվենք և ուրիշների համար լույս լինենք: Մենք պիտի մեծացնենք մեր վկայությունը, մինչև այն դառնա մեր կյանքի խարիսխը:

Այսօր մեզ անհրաժեշտ հավատքը ձեռք բերելու և պահելու համար ամենաարդյունավետ ուղիներից մեկը հաճախակի և կանոնավոր կերպով սուրբ գրությունները կարդալն ու ուսումնասիրելը և աղոթելն է: Եկեղեցու երիտասարդներին ես ասում եմ՝ եթե դուք դա չեք արել, այժմ սովորություն ձեռք բերեք ամեն օր ուսումնասիրել սուրբ գրությունները և աղոթել: Առանց այս երկու հենակետային սովորությունների, կյանքի արտաքին ազդեցությունները և երբեմն ծանր իրավիճակները կարող են աղոտացնել կամ նույնիսկ մարել ձեր լույսը:

Դեռահասության տարիները հեշտ չեն: Դրանք հիմնական տարիներն են, երբ սատանան կփորձի ձեզ և կանի ամեն հնարավոր բան, որ շեղի ճանապարհից, որը կառաջնորդի ձեզ ետ՝ դեպի ձեր երկնային տուն: Սակայն, եթե դուք կարդաք և աղոթեք, և եթե դուք ծառայեք և հնազանդվեք, դուք ավելի լավ կճանաչեք «լույսը, որը շողում է խավարում» (ՎԵՈՒ 6.21), մեր Օրինակին և մեր ուժին՝ հենց Տեր Հիսուս Քրիստոսին: Նա է Լույսը, որը մենք պետք է բարձր պահենք, որպեսզի ցրենք հավաքվող խավարը (տես 3 Նեփի 18.24):

Ունենալով ամուր վկայություն Փրկիչի և Նրա վերականգնված ավետարանի մասին՝ դուք ունեք անսպառ շողալու հնարավորություն: Դրանք շրջապատում են ձեզ ամեն օր՝ ինչպիսի հանգամանքներում էլ դուք լինեք: Երբ դուք հետևեք Փրկիչի օրինակին, դուք հնարավորություն կունենաք լինելու լույս, ինչպես այն եղել է, նրանց կյանքում, ովքեր շրջապատում են ձեզ՝ լինեն նրանք ձեր իսկ ընտանիքի անդամները,

դասարանցիները, գործընկերները, պարզապես ծանոթներ կամ ընդհանրապես անծանոթներ:

Երբ դուք լույս եք աշխարհի համար, ձեր շուրջը գտնվող մարդիկ կզգան յուրահատուկ հոգի, որը նրանց մոտ ցանկություն կառաջացնի շփվելու ձեր հետ և հետևելու ձեր օրինակին:

Ես խնդրում եմ մեր պատանիների ծնողներին և ղեկավարներին օգնել նրանց անսասան մնալ ճշմարտության և արդարության մեջ: Օգնեք, որ նրանց տեսադաշտում լայն բացվեն ուսման, հասկացողության և Աստծո արքայությունում ծառայելու դարպասները: Նրանց մեջ ուժ զարգացրեք՝ դիմակայելու աշխարհի գայթակղություններին: Տվեք նրանց ցանկություն՝ քայլելու առաքինության և հավատքի մեջ, լինելու աղոթող և նայելու երկնքին՝ որպես նրանց հիմնական խարիսխ:

Մեր երիտասարդներին ես ասում եմ՝ մեր Երկնային Հայրը սիրում է ձեզ: Թող որ դուք զգաք նաև սերը, որը Եկեղեցու ղեկավարները տածում են ձեր հանդեպ: Թող որ դուք միշտ ցանկություն ունենաք ծառայելու ձեր Երկնային Հորը և Նրա Որդուն: Եվ թող որ դուք միշտ քայլել ճշմարտության մեջ և լույս լինեք Աստծո զավակների մեջ:

ՈՒՍՈՒՑՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

Խորհեք, թե ինչպես կարող եք քննարկել նրանց հետ, ում ուսուցանում եք, թե ինչ է նշանակում լինել «լույսի [զավակ]»: Ինչ պարտականություններ է այն բերում: Դուք կարող եք քննարկել ժամանակները, երբ նրանց լույսն առանձնահատուկ պայծառություն է ունեցել և ինչն է այն պայծառ դարձրել: Խնդրեք նրանց մտածել որոշակի անձնավորության մասին, ինչպես օրինակ մի երիտասարդի, գործընկերոջ կամ իրենց ընտանիքի անդամի մասին, ով լույսի կարիք ունի: Ապա դուք կարող եք միասին աղոթել, թե ինչպես կիսել լույսը այդ անձնավորության հետ:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Լույսի փարոսը

Նախագահ Մոնսոնը ուսուցանում է, որ Եկեղեցու երիտասարդները «կանչված են լինելու տաճարի փարոս՝ սփռելու ավետարանի լույսը ավելի ու ավելի խավարող աշխարհում»: Նա առաջարկում է մի քանի ուղիներ, որոնցով դուք կարող եք անել դա.

Կիսվել ավետարանով
Հավատալ
Հավատք դրսևորել
Լույս լինել ուրիշների համար
Մեծացնել մեր վկայությունը, մինչև այն դառնա մեր կյանքի խարիսխը
Կարդալ ու ուսումնասիրել սուրբ գրությունները
Հաճախակի և հետևողականորեն աղոթել
Ծառայել
Հնազանդվել

Խորհեք այս ոլորտներից յուրաքանչյուրում 1-5 միավորների սահմաններում ձեզ գնահատելու մասին: Ավելի ցածր գնահատված ոլորտների համար դուք կարող եք ուսումնասիրել այս թեմաները սուրբ գրություններում կամ փնտրեք դրանք LDS.org-ում: Այս թեմաներն ուսումնասիրելուց հետո դուք կարող եք մտածել ուղիների մասին, որոնցով կարող եք ամրացնել այդ ոլորտները և նպատակներ դնել դա անելու համար:

ԵՐԵԽԱՆԵՐ

Շողացրեք ձեր լույսը

Որպես Աստծո զավակ՝ դուք լույսի զավակ եք: Դուք կարող եք ավելի շատ լույս ձեռք բերել՝ մեր Փրկիչին՝ Հիսուս Քրիստոսին հետևելով: Հիսուս Քրիստոսը և Երկնային Հայրը սիրում են ձեզ և ցանկանում են, որ դուք շողաք ուրիշների համար և առաջնորդեք նրանց Քրիստոսի մոտ: Դուք կարող եք շողալ պարզապես լինելով այնպիսին, ինչպիսին կաք, երբ հետևում եք պատվիրաններին, օրինակ՝ աղոթում եք և կարդում եք սուրբ գրությունները: Թղթի վրա նկարեք մի քանի աստղ և վերնագրեք դրանք գաղափարներով, թե ինչպես կարող եք շողալ ուրիշների համար որպես Հիսուս Քրիստոսի օրինակ (օրինակ՝ «եկեղեցի գնալ» կամ «օգնել իմ ընտանիքին»):

© 2015 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/15: Թարգմանության հաստատումը. 6/15: *First Presidency Message, August 2015-ի թարգմանությունը:* Armenian 12588 201

Հիսուս Քրիստոսի հատկանիշները. հեզ և խոնարհ

Աղոթքով ուսումնասիրեք այս նյութը և փորձեք հասկանալ, թե ինչով պետք է կիսվեք: Փրկիչի կյանքը և դերերը հասկանալը ինչպե՞ս կմեծացնեն ձեր հավատքը Նրա հանդեպ և կօրհնեն նրանց, ում համար դուք հոգ եք տանում այցելությամբ ուսուցման միջոցով: Լրացուցիչ տեղեկության համար այցելեք reliefsociety.lds.org:

Հավատք, Ընտանիք, Սփոփանք

Սա Այցելող Ուսուցիչների Ուղերձների այն շարքից է, որը նվիրված է Փրկիչի հատկանիշներին:

Հիսուսն ասել է. «Ձեր միջի մեծը՝ թող փոքրագոյնի պէս լինի, եւ առաջնորդը ծառայողի պէս: Որովհետեւ ո՞վ է մեծ. սեղան նստո՞ղը թէ ծառայողը. չէ՞ որ սեղան նստողը. բայց ես ձեր միջումը ծառայողի պէս եմ» (Ղուկաս ԻԲ.26-27):

«Փրկիչը հեզության և խոնարհության մեր ամենամեծ օրինակն է: Ամեն բանից հետո, Իր կամքը Իր Հոր կամքին ենթարկելը առաջ բերեց ամենամեծ բանը և նույնիսկ ամենազորավորը, նույնիսկ ողջ պատմության մեջ: Հավանաբար ամբողջ սուրբ գրություններում ամենասուրբ բառերից են պարզապես հետևյալը. «Ոչ թէ իմ կամքը՝ բայց քո կամքը լինի» (Ղուկաս ԻԲ.42)»:[1]

Որպես Հիսուս Քրիստոսի աշակերտներ մենք միշտ ձգտում ենք նմանվել Իրեն: «Հեզությունը կենսական նշանակություն ունի մեզ համար, որպեսզի ավելի նմանվենք Քրիստոսին», ասել է Երեց Ուլիսես Սոարեսը՝ Յոթանասունի Նախագահությունից: «Առանց դրա մենք չենք կարող զարգացնել այլ կարևոր արժանիքներ: Հեզ լինելը չի նշանակում լինել թույլ, այլ նշանակում է վարվել առաքինությամբ և բարությամբ, ցույց տալ ուժ, պարզություն, առողջ ինքնագնահատական և ինքնակառավարում»:[2] Մինչ մենք աշխատենք զարգացնել այս հատկանիշը, մենք կնկատենք, որ «մեր կամքը հեզությամբ Հորը ենթարկելը ընձեռում է մեզ աստվածային արտոնություններ՝ հեզության զորությունը: Դա կյանքի դժվարությունները հաղթահարելու զորությունն է, խաղաղության զորությունը, հույսի զորությունը, Փրկիչ Հիսուս Քրիստոսի սիրո և վկայության համար տրոփող սիրտ ունենալու զորությունն է՝ հենց փրկագնման զորությունը»:[3]

Լրացուցիչ սուրբ գրություններ

Մատթեոս ԻԶ.39, Հովհաննես Ե.30, Մոսիա 3.19, Հելաման 3.35

Սուրբ գրություններից

Քրիստոսի ծառայության ամենաքնքուշ և ամենազորեզ պահը եղել է այն, երբ Նա լվաց Իր աշակերտների ոտքերը: «Ընթրիքիցը վերկացաւ եւ հանդերձները վայր դրաւ, եւ մի ղենջակ առաւ իր մէջքը պատեց: Յետոյ ջուր ածեց կոնքը, եւ սկսեց աշակերտների ոտները լուանալ, եւ այն ղենջակովը սրբել որ մէջքին պատած էր» (Հովհաննես ԺԳ.4-5):

Երբ Փրկիչը կատարեց այս արարողությունը, աշակերտները հավանաբար ցնցված էին, որ իրենց Տերը և Վարդապետը ծնկի էր իջել իրենց առջև և կատարում էր այդքան հեզ մի ծառայություն: Ապա Հիսուսը բացատրեց դասը, որ ցանկանում էր նրանք և մենք բոլորս սովորենք.

«Արդ եթէ ես Տէրս եւ Վարդապետս՝ ձեր ոտները լուացի, դուք էլ պէտք է իրար ոտները լուանաք:

«Որովհետեւ ես ձեզ օրինակ տուի, որ ինչպէս ես ձեզի արի, դուք էլ անէք» (Հովհաննես ԺԳ.14-15):

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Richard C. Edgley, "The Empowerment of Humility," *Liahona,* Nov. 2003, 99.
2. Ուլիսես Սոարես, «Եղեք հեզ ու սրտով խոնարհ», *Լիահոնա,* նոյ. 2013, 9:
3. Richard C. Edgley, "The Empowerment of Humility," 99.

Խորհեք այս մասին

Ինչպե՞ս կարող է համեստ լինելն օգնել մեզ սիրել Փրկիչի նման:

© 2015 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/15: Թարգմանության հաստատումը. 6/15: *Visiting Teaching Message, August 2015*-ի թարգմանությունը: Armenian 12588 201